Շուշանիկ Կուրղինյան

Նամակ Արշակին 1

24 մարտի, 1895 թ.
Ալեքսանդրապոլ
Հարգելի Արշակ,

Շնորհավորում եմ քսանամյա տարեդարձդ՝ ցանկանալով քեզ երկար և երջանիկ կյանք, տոկունություն կյանքի ձախորդ խոչընդոտների դեմ մաքառելու և իրագործումն իղձերիդ ու միտումներիդ . . .

Առաջ գնա, իմ բարեկամ,
Կյանքի ազնիվ ուղիով՝
Ուր թե շուտ կամ անագան
Որ վարես սուրբ կյանք . . . վեհ սիրով . . .
Գնա առաջ . . . մի երկնչիր,
Թող ծաղրեն քեզ տխմարներ՝
Լոկ այդ ուղիով կը վայելես
Երջանկության սեգ ժամեր . . .
Շ. Փոփոլճյանց